ՀՈԴՎԱԾՆԵՐ · СТАТЬИ

ՊԵՐՃ ՊՈՌՇՅԱՆ
(Ծննդյան 150-ամյակի առթիվ)

Հ. Դ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

Պերճ Պոռշյանը, հայ դասական գրականության նշանավոր դեմքերից մեկը, ապրեց երկար ու բեղմնավոր ստեղծագործական կյանքով։ Նրա ստեղծագործությունը գալիս է ժողովրդի կյանքի ամենախոր ակունքներից, հարըստանում ժամանակի շնչով և մարդու նկատմամբ անսահման սիրով ու հավատով։ Պոռշյանի գրական տարերքն առավել ուժգնությամբ դրսևորվեց վիպական ժանրերում։ Դարի սոցիալական կոնֆլիկտներն արտացոլող նրա վեպերը լայն ժողովրդականություն են վայելում, և ինչպես Թումանյանն է ասում՝ «խոսում են ամեն սրտում»։ Պոռշյանի գրական գործունեության 40-ամյա հոբելյանի առթիվ նրա ստեղծագործությանը Թումանյանի տված գնահատականը չի կորցրել իր թարմությունը։ Իրոք, շատ մեծ է Պոռշյանի ստեղծագործության ճանաչողական, հասարակագիտական արժեքը հետռեֆորմյան հայ գյուղում կատարվող սոցիալական տեղաշարժերն ընկալելու, առավել ևս իմաստավորելու գործում։ Պոռշյանը գրականություն բերեց հասարակության մի ամբողջ խավի՝ գյուղացիության սոցիալ-դասակարգային գիտակցության, ընդվզումի ու տարերային պայքարի, հոգեբանության ու կենցաղի, հայրենի բնաշխարհի ու պատմական, աշխարհագրական միջավայրի գեղարվեստական անկրկնելի պատկերներ, որոնք լի են քնարական ջերմությամբ ու բարոյական արժեքների կորստյան տագնապներով։ Քայքայվող գյուղի օրեցօր խորացող ողբերգությունը նրա երկերում խոր նստվածքներ է տվել և գրողին մղել արդարության տենդագին որոնումների։

Պոռշյանի ստեղծած գեղարվեստական արժեքները միայն անցյալին չեն պատկանում և դրանց դերը այսօրվա մարդու հոգևոր կյանքում միայն ճանաչողական նշանակությամբ չի սահմանափակվում։ Բարոյական իր բարձր սկզբունքներով, մարդկային վսեմ առաքինությունների ջանադիր ու հետևողական փառաբանությամբ, հասարակական չարիքի դեմ հայտարարած անհաշտ պայքարով և, իհարկե, այս ամենի հետ ու ամենից առաջ՝ մեծ, անձնուրաց հայրենասիրությամբ, իր հող ու ջրին անմնացորդ նվիրվածությամբ, հայրենի աշխարհը միշտ շեն ու ծաղկուն տեսնելու ձգտումով Պոռշյանն այսօր էլ խոսում է մեր ժամանակակցի հետ։

Պերճ Պոռշյանը (Հովհաննես Տեր-Առաքելյան) ծնվել է 1837 թ. հունիսի 15-ին, Աշտարակում։ Նրա հայրը՝ դերձակ Ստեփանը, աշխարհ տեսած, գրասեր մարդ էր և ինքն առաջինը որդուն հաղորդակից դարձրեց գրքերի աշխարհին։ Շատ կարճ ժամանակամիջոցում հնգամյա Հովհաննեսին սովորեցրեց հայոց այբուբենը, ապա տեսնելով տղայի արտակարգ ընդունակությունները, որոշեց նրան անպայման կանոնավոր կրթություն տալ, իսկ գյուղի միակ դպրոցը վաղուց դադարել էր գործելուց։ Չափավոր ապրուստի տեր դերձակ Ստեփանը ապրում էր փոքրիկ այգուց ստացված հասույթով ու արհեստի ընձեռած համեստ միջոցներով և որդու կրթության համար նյութական զոհողության հնարավորություններ չուներ։ Բայց դրա փոխարեն ուներ ուսման մեծ սեր, ձեռներեց էր և ամենից կարևորը՝ որպես ազնիվ ու աշխատասեր մարդ վայելում էր համագյուղացիների հարգանքը և նրանց աջակցությամբ էլ հաջողեցնում է Աշտարակում նոր դպրոց բացելու գործը։ Հենց այս դպրոցում էլ Պոռշյանը սկսում է իր ուսումնառությունը։ Աշտարակի դպրոցը փակվելուց հետո ուսումը շարունակում է Մուղնու վանքում, հետո ընդունվում է Թիֆլիսի Ներ-

սիսյան դպրոցը, ավարտում գերազանց գնահատականներով։ Հրաժարվելով իր համար նախատեսված հոգևորականի գործունեությունից, մտնում է արքունական գիմնազիա, սակայն ապրուստի միջոցներ չունենալով, ընդամենը երեք ամիս հետո ստիպված է լինում թողնել այն և մեկնել Աշտարակ, զբաղվել մանկավարժությամբ։ Այնուհետև սկսվում է ապագա գրողի դժվարին, հաճախ նույնիսկ փորձություններով լի ուսումնառությունը կյանքի համալսարաններում՝ մանկավարժ Աշտարակում, հոգևոր գործակալի քարտուղար Ապարանի, Կարբու, Թալինի գյուղորայքում, Աշտարակի շրջակա մոտ յոթանասուն գյուղերում, նորից Թիֆլիս՝ ուսուցիչ Ներսիսյան դպրոցում, ածխավաճառ, խմբագրությունների աշխատակից, լուսանկարիչ՝ Թիֆլիսում ու Հյուսիսային Կովկասում։

Թիֆլիսում, Ներսիսյան դպրոցում սովորելիս, նրա ձեռքն է ընկնում Աբովյանի «Վերք Հայաստանին»։ Գիրքը հափշտակում է երիտասարդին, տակն ու վրա անում նրա ողջ էությունը։ Սա երիտասարդ Պռոշյանի երկրորդ հանդիպումն էր Աբովյանի հետ։ Առաջինը տարիներ առաջ էր եղել, երբ նա հայրենի գյուղի դպրոցի սան էր, ու իրենց դպրոցը այցելության էր եկել խաչատուր Աբովյանը։ Տեսուչի առաջ իրենց դպրոցի հաջողությունները ցուցադրելու համար, պարծենկոտությամբ դաս են հարցնում ութամյա Հովհաննեսին, որն իր զարմանալի ընդունակություններով դպրոցի զարդն էր։ Աբովյանը գոհունակությամբ շոյում է մանկան գլուխը, ոգևորում։ Եվրոպական հագուստով այդ մարդը եկել էր Պռոշյանին անծանոթ մի այլ աշխարհից և ոչնչով նման չէր իրեն շրջապատող մյուս մարդկանց։

«Վերք Հայաստանի» և խաչատուր Աբովյանց բառերը լափեցին հետաքրքրությունս. դեռ չթերթած, կազմին նայելով, շվարածի նման շուռեշուռ էի տալիս։

Սկսեցի հառաջաբանից։

Դժվար է ինձ պատմել այն տպավորությունը և այն հնդհեղուկ զգացմունքները, որ անդադար ներսումս միմյանց հետևում էին. մի բոպե արտասուք տրտմաթախիծ, մյուս վայրկենին՝ ուրախության արտասուք, երրորդ ակընթարթին՝ նստած տեղիցս անհեթեթ ոստումներ... Թե ինչպես անցավ ժամանակը, ոչինչ չեմ կարող ասել»[1]։

Պարզ հետաքրքրասիրությունը Պռոշյանի մոտ վերաճում է վեպի ամենաբարձր, հիացական գնահատականի. «...Ի՞նչ է անում պարոն Աբովյանցը. այս ի՞նչ նորանշան և սքանչելի երևույթ է մեր գրականության մեջ, ո՞ւր էր թաքցրած մինչև օրս այս անգին գանձը» (7, 182)։

Ոգևորված այս վեպով նա որոշում է աշակերտել Աբովյանին. «Եվ ընչի՞,— մտածում է նա,—հետևողներ չունենա Աբովյանցը. ինչի՞ զուրկ պահել մեր ժողովրդին ընթերցասիրությունից, մինչև ե՞րբ մեր գրականությունը գրագետ դասակարգի սեփականությունը մնա» (7, 182)։

Նույն գիշեր նա մեծ հափշտակությամբ նորից է կարդում «Վերքը». «Աքաղաղը հինգ բերան կանչել էր, որ տեղս մտա։ Քնիս մեջ շարունակ Աշտարակումն էի ման գալիս»։ Եվ այսպես, հենց նույն երեկոյան էլ ծնվում է ապագա վեպի թեման՝ Աշտարակն իր վարք ու բարքով, կենցաղով, ծիսակատարություններով, մարդկային փոքր ու մեծ ուրախություններով, հուզումներով ու տագնապներով, առօրյա հոգսերով ու ապագային հառված հայացքով։ «Խանութից թուղթ ու թանաք գնեցի, փոնչու մոտից հինգ կոպեկի հաց առա և ողջ օրը սենյակիցս դուրս չեկա։

Ծունկս սեղան էի շինել և գրում էի։

«Սոս և Վարդիթերն էի գրում» (7, 408)։

Գրում էր իր տեսածն ու զգացածը, գրում էր իր հայրենի Աշտարակի մասին, իր հարազատ բարբառով։ Վեպը հրապարակվեց 1860 թ. «Կռունկ հայոց աշխարհին» ամսագրում, ապա և առանձին գրքով։ Դա մի կատարյալ հայա-

1 Պերճ Պռոշյան. Երկերի ժողովածու. հ. 7, էջ 181—182 (այսուհետև հատորը և էջերը՝ տեքստում)։

նություն էր, և քսաներկուամյա երիտասարդի մուտքը գրականություն միանգամից իր վրա բևեռեց ինչպես ընթերցող հասարակության, այնպես էլ գրական քննադատության ուշադրությունը։ Երբ լույս տեսավ «Սոս և Վարդիթերը» ընթերցողները դեռ չէին հասցրել ազատվել Աբովյանի «Վերքի» կախարդական հմայքից։ Սակայն դա չխանգարեց այս նոր վեպի հաջողությանը, քանի որ նրանում բացահայտորեն զգացվում էր Աբովյանի հարազատ շունչը։ Թեև տարբեր էին այս երկու վեպերի պատկերած ժամանակն ու ժողովրդին հուզող խնդիրները, սակայն դրանք ինչ-որ տեղ լրացնում էին միմյանց՝ հայրենասիրությամբ, ժողովրդասիրությամբ ու ազգային կյանքի նրբին իմացությամբ։

Վեպի հիմքում ընկած է գյուղական պատանիների՝ Սոսի և Վարդիթերի ողբերգական սիրո պատմությունը։ Սակայն հեղինակը վեպը կառուցում է ոչ թե որպես ընտանեկան դրամա, այլ ժողովրդական կյանքի ողբերգություն։ Այդ պատճառով էլ գլխավոր հերոս հասկացությունն էլ այստեղ զուտ պայմանական է։ Սոսի և Վարդիթերի սիրավեպը ժողովրդական կյանքի մի անբաժան մասն է կազմում և իմաստավորվում է հենց այդ կյանքում կատարվող ներքին տեղաշարժերով։ Հերոսների ողբերգական սիրո պատմությունը հազիվ թե տեսականորեն հետաքրքրեր ընթերցողներին, եթե հասարակական լուրջ հիմնավորումներ չունենար։ Իսկ այդ հիմնավորումները վեպ են մուծվում խաղաղ, ժամանակի մեջ անշտապ հոսող ընթացքով՝ ազգային ծեսերի, սովորությունների, հավատալիքների, կենցաղի, վարք ու բարքի, բարոյական սկզբունքների տեսքով։ Մի խոսքով այն ամենով ինչը դարերի ընթացքում կազմավորում է ժողովրդի հոգեբանությունը։ Վեպի ամբողջ պատումը սահմանափակվում է ժամանակի մի կարճ հատվածում՝ մարտ ամսից մինչև նոր տարի։ Սակայն այնպիսի հանդիսավոր, դանդաղ ռիթմով է տարվում պատումը, որ թվում է հազարամյակների հեքը կա այնտեղ։ Վեպում նկարագրվում են ժողովրդի հոգևոր կերտվածքում խոր նստվածքներ տված դարավոր ծեսեր ու սովորույթներ, ընթերցողին փոխադրում մի բանաստեղծական մաքուր աշխարհ, որը թվում է, թե անվախճան է իր ընթացքի մեջ և ոչինչ չի կարող խանգարել նրա կյանքի այդ դանդաղ, հանդիսավոր ընթացքը։ Եվ այս պայմաններում փողային հարաբերությունների մուտքը կործանարար է դառնում։ Առաջին զոհերը Սոսն ու Վարդիթերն են։ Սակայն դրանով չի սահմանափակվում աղետը. հոգեպես հաշմանդամ են դառնում նաև նրանց շրջապատող մարդիկ։ Եվ որքան անամպ էր վեպում նկարագրվող ժողովրդական կյանքի երկինքը, նույնքան զարհուրելի է դառնում աղետը։ Պռոշյանն այս վեպում դրամի ավերիչ ազդեցությունը ներկայացնում է այնպիսի ուժով, որ միանգամայն պարզ է դառնում, որ հասարակական կյանքում բուն դրած այդ ցեցը կամաց-կամաց լափելով, իրեն ենթարկելով կյանքի կառավարումը բոլոր ոլորտներում, դառնալու է անկասելի չարիք։ Գործակալը կաշառք է վերցնում հասը շհաս և շհասը հաս դարձնելու համար, քույրն իր ամուսնու հետ, հանուն 20 արծաթի, հարազատ եղբոր մահվան պատճառ է դառնում։

Գյուղում ընդհանուր մասսայից առանձնանում է մի դաս, որը թեև առայժմ ակտիվ գործողություններ չի դիմել ուրիշի աշխատանքը շահագործելու համար, բայց արդեն հարստությունը համարում է իր մեծագույն առավելությունը։ Վեպում լսվում են սոցիալական բողոքի առաջին երկչոտ, անհամարձակ ձայները։ Նոր-նոր ծլարձակվող այս քննադատական ոգին հասարակական մեծ խմորումների ու մեծ վերափոխումների, սոցիալական շերտավորման խորացման ու տարերային ընդվզումի առաջին նախագուշակն ու առաջին արձագանքն է մեր գրականության մեջ։

Մ. Նալբանդյանն իր հայտնի «Կրիտիկայում» հատուկ ուշադրություն է հրավիրում վեպի հենց ընդվզող կերպարների (Վայկուն, Արշամ) վրա, ափսոսալով, որ նրանք «քիչ հանդես ունեն» վեպում։ Նալբանդյանը, բարձր գնահատելով երիտասարդ գրողի առաջին վեպը, մարգարնաբար կանխատեսում էր նաև նրա ստեղծագործության հետագա ուղղությունը։ Պռոշյանը գիտեր «Կրիտիկայի» մասին և շատ ջանքեր գործադրեց այն կարդալու համար, սակայն ձեռագիրը կորած էր, իսկ տպագրված փոքրիկ հատվածը միայն վեպի լեղվին էր վերաբերում։ Ու թեև գրողը բախտ չունեցավ ծանոթանալու իր Նրաթայրիքի մասին գրված այդ հանդամանալի քննությանը, նրա ստեղծագործությունը հետագայում ընթացավ հենց Նալբանդյանի նախանշած ճանապարհով։ Սա այն հազվադեպ երջանիկ զուգադիպություններից էր, երբ գրողն ու քննադատը միասնական էին իրենց աշխարհընկալման մեջ։ Վեպից վեպ զորանում է նրա ստեղծագործության քննադատական ոգին։

Պռոշյանի երկրորդ վեպը՝ «Կռվածաղիկը», լույս տեսավ 1876 թ.։ Ստեղծագործական մոտ մեկ ու կես տասնամյակի դադարն արգասավորող միակ գրական երկը Աբովյանի «Վերքի» մոտիվներով գրված «Աղասի» ողբերգությունն էր (1863 թ.), որը կոչված էր ժամանակակից սերունդներին պատմության դասերով հայրենասիրության, քաջության, բարոյական բարձր սկզբունքների ոգով դաստիարակելու։ Այդ շրջանում նա զբաղվում էր մանկավարժությամբ, թատերական ու հասարակական գործունեությամբ։ Նրա ստեղծած թատերախումբը, որը հայրենասիրական պիեսներ էր բեմադրում, մեծ համբավ էր վայելում թատերասերների շրջանում և հայտնի էր «Պերճական» թատրոն անունով։ Ստեղծագործական թմիրից նրան հանում է Աբգար Հովհաննիսյանի նամակը, որով «Սոս և Վարդիթերի» հեղինակին առաջարկվում է իր աշխատակցությունը բերել նորաստեղծ «Փորձ» հանդեսին։

Գրողը նորից ստեղծագործական տարերքի մեջ է, և կարճ ժամանակից հետո «Փորձում» երևում են նոր վեպի՝ «Կռվածաղիկի» առաջին գլուխները։ Առանձին գրքով այն լույս է տեսնում 1878 թ. Թիֆլիսում։ «Կռվածաղիկը» պատկերում է XVIII դարի վերջին տասնամյակների իրադարձությունները՝ պարսկական տիրապետության մայրամուտին նախորդող ժամանակահատվածը, ինչպես ինքն է ասում՝ «Աշտարակու դարով առաջ» կյանքը։

Պատմական թեմատիկային անդրադառնալով նա չի հրաժարվում ժամանակակից կյանքի պրոբլեմների գեղարվեստական արծարծումներից։ Պատմությունը միջոց է դարձնում իրեն շրջապատող մարդկանց արատավոր բարքերը քննադատելու։ Ղ. Աղայանին ուղղված մի նամակում նա գրում է. «Էջմիածնի ներկա կյանքը հնի մեջ դուրս է գալիս իր ամեն տեսակ խայտառակությամբը և արժանավորություններովը, գործող անձինքը յուրյանց մականուններովը ներկա հերոսներն են 100 տարի առաջ տարած» (7, 480)։ Պռոշյանը իր առաջին պատմավեպում ստեղծում է օրինակելի հասարակության մի մոդել, որտեղ վերացված են ազգամիջյան թշնամանքն ու ոխակալությունը, հարևան հայ թուրք և քուրդ աշխատավորները ապրում են համերաշխ, հայ գեղջուկը դաշտ է դուրս գալիս և առանց վախենալու իր վար ու ցանքն է անում, վերացել են ժողովրդին շահագործող, թուրք տիրակալների հետ համագործակցող, դավաճան տեր Մարուքներն ու Ղևոնդ աղաները, երկիրը կառավարում են բարի հոգևոր ու աշխարհիկ առաջնորդները։

Հենց միայն այն, որ գրողը հավատում էր ֆիզիկական, բարոյական ու տնտեսական ճնշումից ազատ, իրավահավասարության պայմաններում զար-

գացող երջանիկ հասարակության գոյությանը, ինքնին առաջադիմական քայլ էր պատմական այդ ժամանակաշրջանի համար։

«Կովածաղիկը», չնայած իր նկատելի թերություններին, լուրջ ներդրում էր հայ վիպագրության մեջ, որը շարունակելով Աբովյանի ավանդները, նրա հետ միասին հիմք դրեց հայ պատմավեպին, հատկանշելով նրա թեմատիկ ուղղությունն ու հայրենասիրական ոգին։

1879 թ. «Փորձում» լույս տեսավ Պռոշյանի «Հացի խնդիրը»։ Մեկ տարի անց այն հրատարակվեց առանձին գրքով։ Նա կրկին վերադարձել էր հայ գյուղի թեմային ու նրա նորօրյա սոցիալական խնդիրներին, թեև անգամ պատմական թեմայով գրված երկերում նա մնում է իր ժամանակի հարազատ որդին։ Սկսած առաջին վեպից, որն ավելի շատ ազգագրական, կենցաղային ուղղվածություն ուներ, նրա բոլոր երկերում զգացվում է սոցիալական ծանր հակասություններով լի ժամանակի ոգին, և սա այն գլխավոր գիծն է, որ իրար է միացնում նրա բոլոր երկերը։ Հասարակության սոցիալական շերտավորման, նահապետական գյուղի քայքայման պրոցեսները, ժողովրդի հոգեբանության ու կենցաղի դարավոր ավանդույթների փլուզումը, որոնց միայն նախանշաններն են երևում «Սոս և Վարդիթերում», վեպից վեպ ավելի հստակորեն են գծագրվում, և հասարակական ողբերգությունն արդեն դառնում է դաժան իրողություն։

«Հացի խնդիրը» վեպում ևս օգտագործված է բանահյուսական հարուստ նյութ։ Գրողն իր հերոսներին այլ կերպ չի պատկերացնում, քան նրանց համար բնորոշ ազգային միջավայրում, ուր գալիս ագուցվում են ժամանակն ու տարածությունը, միջավայրն ու նրանից ծնունդ առած մարդիկ, դառնում մի ամբողջական կենդանի օրգանիզմ։ Գեղագիտական այս սկզբունքը չընկալելու հետևանք էր քննադատության կողմից ներկայացված մեղադրանքների մեծ մասը, հատկապես նրա առաջին վեպի կապակցությամբ։ Սակայն Պռոշյանը մինչև վերջ հավատարիմ մնաց այդ սկզբունքին, քանի որ վստահ էր, թե միայն այդպես կարելի է բացահայտել արվեստի գերագույն ճշմարտությունը։

Դատելով գրողի հրապարակած առաջին երեք վեպերից, կարելի է խոսել նրա վիպական արվեստի մի կարևոր առանձնահատկության մասին ևս. իրողությունները նա քննարկում և իմաստավորում է ժամանակների անխզելի կապի մեջ, երբեմն-երբեմն ստեղծագործության զուտ ռեալիստական հենքի մեջ մուծելով ռոմանտիկական արվեստի տարրերը։

«Հացի խնդիրը» պատկերում է անցյալ դարի 40—50-ական թթ. իրադարձությունները։ Գրողն աննկատելիորեն համադրում է ժողովրդի պատմական անցյալն ու ներկան, ժամանակների ու պատմական իրադարձությունների սինթեզումը կատարելով վեպի սահմաններից դուրս՝ ընթերցողի մտապատկերներում։ Վեպը, կառուցված լինելով միանգամայն այլ սյուժեով, շարունակում է նախորդ երկերում մի անգամ արդեն բացված խոսակցությունը հայ ժողովրդի ազգային ու սոցիալական ազատագրության մասին, որն այդպես էլ մնացել էր երազանքի ու իրականության սահմանագծում։ Ռուսական զենքի ու զորքի օգնությամբ հայրենիքն ազատագրվել էր պարսկական տիրապետության դարավոր ճղճավանջից, վերացել էր ֆիզիկական բնաջնջման վտանգը, բայց առավելագույն կերպով սրվել էր սոցիալական կոնֆլիկտը, որը պակաս ավերածություններ չէր գործում։ Եվ նահապետական գյուղն ապրում էր մի նոր ողբերգություն, որը գնալով ավելի էր խորանում։

Ինչպես նախորդ վեպերում, այստեղ ևս սյուժեի հիմքում ընկած է սիրային մի պատմություն, որը թվում է, թե պիտի ծավալվեր կենցաղային, սիրային վեպերին հատուկ ավանդական եռանկյունու՝ Հեղնար-Սմբատ-Հերիքնազ, շրջանակներում՝ պատմությունը հասցնելով մելոդրամատիկ վախճանի։ Սակայն այս կերպարների վարքագիծը պայմանավորող սիրո և պարտքի գիտակցության սկզբունքները բախվում են փողատիրական աշխարհի դաժան օրենքներին։ Մի կողմում նահապետական մաքուր բարքերի կրողներն են՝ Խեչանանց Խեչան, Հեղնար, Սմբատ, Հերիքնազ, մյուս կողմում՝ Միկիտան Սաքո, Մովրով, յասաուլներ ու փողի քսակը պաշտող հոգևոր առաջնորդներ։

Բախվում են հասարակության այս երկու հակոտնյա ուժերը, ամեն մեկն իր կացութաձևով ու բարոյական սկզբունքներով, ամեն մեկը գոյության իրավունքի իր փիլիսոփայությամբ։ Փողի ու շահի հոգևբանությունը անկասելի վարակի ուժ է ստացել, նահապետական գյուղն անդառնալիորեն քայքայվում է, ժողովրդի հոգևբանության ու բարոյական նկարագրի մեջ հայտնվում են մինչ այդ անծանոթ գծեր, որոնք երևան են եկել փողային հարաբերությունների ներթափանցման հետևանքով։ Անհատի շահագործումը անասելի չափերի է հասել. գիշատիչը, միջոցների մեջ խտրություն չդնելով, գործադրում է սատանայական ամեն հնարք՝ կուտակած հարստությունը բազմապատկելու համար։ Սաքոն, որ իր բոի մեջ է պահում ամբողջ գավառը, որոշում է տիրանալ նաև Խեչանի հարստությանը։ Խափանում է երիտասարդների երջանկությունը, խարդավանքով բանտ նետում Խեչանին։ Երբ քամվել են զոհի վերջին հյութերը, հայտնվում է արդարադատ դատավորը և աղատում Խեչանին։ Սակայն լավատեսական ավարտ չի ստացվում։ Խեչանը դուրս է գալիս բանտից, բայց արդեն այն ժամանակ, երբ բարոյապես ու տնտեսապես սպառել է իրեն, այլևս հավակնություն չունի և ոչ էլ հիմքեր՝ սոցիալական կարող ուժ ներկայացնելու։ Նա դուրս է գալիս բանտից ոչ թե ապրելու ու ապրեցնելու համար իր հարազատներին, այլ՝ իր հայտնությամբ ավելի ընդգծելու երբեմնի շեն գերդաստանի կործանման ողբերգությունը։ Երբեմնի հարուստ ու երջանիկ ընտանիքից մնում է միայն Հերիքնազը, որն ամուսնանալով Սմբատի հետ՝ ծխացնում է Խեչանաց Խեչանի ավերակված օջախը։ Սա վերջին բարակ հույսն է կործանվող իդիլիան փրկելու. անշահախնդիր սիրո վրա հենված ընտանիքը առողջ ծիլեր կտա և կնորոգվի ավանդական գյուղական գերդաստանը։ Սակայն արդյոք անամպ կլինի՞ նրանց երկինքը, արդյոք անցե՞լ են բոլոր ձախորդությունները։ Ռեալիստ հեղինակը այս հարցերին բացասական պատասխան է տալիս։ Արդարադատ դատավորի հայտնվելով ոչինչ չի փոխվում դեպի լավը։ Նրա հայտնությունը գրողի համար ոչ թե սոցիալական բարդ հարցեր լուծելու իդեալ է, այլ զուտ գեղարվեստական հնարանք՝ վեպը հանգուցալուծելու համար։

Միկիտան Սաքոն, որ կործանման ու ողբերգությունների սիմվոլ է դարձել, առաջվա նման իր ձեռքում է պահում հասարակական կյանքում կատարվող բոլոր իրադարձությունների ղեկավարման թելերը։ Վերջին պահին խույս տալով արդարադատությունից, շարունակում է իր սև գործը այլ երկրում, այլ անվան տակ։ Հիմա նա գործում է Պարսկաստանի խորքերում՝ որպես քեշիշ աղա մոլլա Էլիազ։ Սաքոյին դուրս բերելով հայկական միջավայրից, գրողը ցույց է տալիս սոցիալական այդ երևույթի տարածման սահմանները. աղետը սպառնում է բոլոր ժողովուրդներին ինչպես Հայաստանում ու Անդրկովկասում, այնպես էլ նրա սահմաններից շատ հեռու։

Նահապետական գյուղը հոգեվարքի մի տանջալից շրջան է թևակոխում և ծայր են առնում օրինական դժգոհությունները տիրող կարգերի դեմ. «...խալխումն էլ հալ չմնաց, եզը վեր են կացնում, տակիցը հորթ ուզում, զոռով մարդկանց կուվացնում են, որ մեջտեղը իրանք մոծակի պես ծծեն՝ արնաքամ անեն. էլ ո՛չ դիվան կա, ո՛չ դատաստան, ո՛չ իրավունք կա, ո՛չ արդարություն. վերջին մեհտարիցը բռնած՝ ընչանք ինքը՝ մովրովը՝ ձեռը դեմ արած ուզում են։ Ախար ո՞րտեղից տան, մի մեր գեղի հալը հարցրու՝ կսարսափես, որ լսես. տուն կա՞, որ պարտքի տակ թաղված չլինի. ի՞նչ են անում, կերածները՝ պաս օրերին ցամաք հաց ա, ուտիսին՝ մի կտոր աղվեսի չոր պանիր, հագածներն էլ՝ որ մի թելը քաշես, ինը հարիր կարկատան վեր կընկնի (2, 18)։

Շատ որոշակի է հեղինակի եզրահանգումը՝ բռնությունն ու շահագործումը իրենք են ծնում իրենց գերեզմանափորին։ Ազատությունը պիտի գա ոչ թե վերևից՝ արդարադատ քննիչների ձեռքով, այլ ներքևից՝ դանակը ոսկորին հասած ժողովրդի ընդդիմադիր ուժով։ Այս նոր գաղափարների արտահայտիչը վեպում ճշմարտախոս Հաքուն է։ Ռուսաստանում ծայր առած գյուղացիական հուզումների ալիքը նաև Հայաստան է հասել։ Գյուղացիության գիտակցության մեջ բացվում են նոր շերտեր, նա կարծես արթնանում է դարավոր թմիրից և

հաշիվ է պահանջում իր կյանքը դժոխք դարձնող պաշտոնյաներից։ Առանձին անհատների շահատակությունները քննադատելով, Պռոշյանը ռեալիզմի ուժով հասնում է խոր ընդհանրացումների. լավ ու վատ պաշտոնյաներ չկան, դրանք բոլորը միասին ներկայացնում են մի հասարակարգ, որտեղ գերագույն դատավորն ու տնօրենը դրամն է։

Այս վեպով Պռոշյանը հայ գրականության գեղարվեստական տիպերի պատկերասարահը հարստացրեց նոր կերպարներով, որոնք իրենց սոցիալական դասի հանճարեղ խտացումներ են։ Դրանց մեջ առավել նշանակալիցը Սաքոյի կերպարն է, որ վաղուց արդեն հասարակ անուն է դարձել։ Նա հանդես է գալիս հեղինակի նաև մյուս երկերում, ընդգծելով իր դասի այլանդակությունն ու ընչաքաղցությունը։

Պատահական չէ, որ «Հացի խնդիրը» միանգամից արժանացավ և՛ ընթերցողների, և՛ քննադատության բարեհաճ ուշադրությանը և իրավացիորեն որակվեց ոչ միայն Պռոշյանի գլուխ գործոցը, այլև ժամանակի հայ գրականության մեծագույն նվաճումներից մեկը, որտեղ «Միկիտան Սաքոն, Խեչանը, նույնիսկ երկրորդական գործող անձինք՝ նկարված են համարձակ վրձինով և զորեղ գույներով»[2]։

Պռոշյանի առաջին վեպերում սոցիալական կոնֆլիկտի գեղարվեստական արծարծումները «Հացի խնդրում» դառնում են լուրջ հարցադրումներ։ Ղ. Աղայանի «Երկու քույր» վեպից հետո սա առաջին մեծակտավ գործն էր հայ իրականության մեջ, որտեղ հիմնական խնդիրը դարձել էր գյուղի սոցիալական իրականության, գյուղը քայքայող դրամատիրական հարաբերությունների, բարքերի ապականման, աշխատավոր մարդու անելանելի ծանր ողբերգության բազմակողմանի պատկերումը։ Եվ վեպում մերթ ընդ մերթ տրվող հարցը՝ «սրա ծերն ո՞ւր պիտի հասնի, սրա ծերն ո՞ւր պիտի կտրվի» (2, 19), պատասխան էր պահանջում։ Հարցի ուղղակի պատասխանը չկա վեպում։ Բայց կա չհանդուրժողականության, ըմբոստության հասունացող հոգեբանության պատկերումը, գյուղում կատարվող սոցիալ-տնտեսական տեղաշարժերին ու արմատական փոփոխություններին զուգընթաց մարդկանց գիտակցության մեջ տեղի ունեցող հեղաշրջման պատկերումը։ Եվ դա այնպիսի խորությամբ, ռեալիզմի այնպիսի ուժով, որ տիրող կարգերի կործանման ու զինված պայքարի գաղափարին հասնելու համար ընդամենը մի քայլ էր մնում։

«Շահենն» վեպով (1883 թ.) Պռոշյանը նորից է դիմում պատմական թեմային։ Դա ժամանակի թելադրանքն էր։ Պատմության նժարին էին դրված ժողովրդի ճակատագրի, գոյատևման խնդիրները. հայ ժողովրդի մի մեծագույն հատված գտնվում էր ֆիզիկական ոչնչացման ռեալ վտանգի տակ։ Արևմտահայ եղբայրների ազատագրական պայքարին օգնելու համար բազմազան միջոցառումներ էին ձեռնարկվում։ Հենց այդ հողի վրա էլ ծայր առավ ազատագրական պայքարի վիպագրությունը։

Եվ ահա հայրենասիրական պարտքի գիտակցությամբ Պռոշյանը ևս դիմում է պատմության դասերին, երբեք չկտրվելով իր ժամանակի հուզող խնդիրներից։ Ընդամենը մեկ տարի առաջ հրատարակված վեպում Պռոշյանը մերկացրել էր շահագործման ու սոցիալական անհավասարության պետական մեխանիզմն ու պատկերել էր գյուղի քայքայման ողբերգությունը։ Արդյոք նշանակո՞ւմ է սա, թե հայ ժողովուրդը սխալվել էր իր պատմական ընտրության մեջ։ Այս հարցին վիպասանը բացասական պատասխան է տալիս. «Սալմաստի գաղթականությունը Երասխի այս ափումն է, պարսկական մոլեռանդ հալածանքից էլ երկյուղ չկա, մոտ է նեղություններից ազատվելու և դարավոր տառապանքներին վերջ տալու օրը, էլ խաչը չի հայհոյվում, հայը հիմի յուր տանն է, քրիստոնյա հզոր բազուկն այժմ նորան հովանավոր է։ Ավետյաց երկիրն իր ամեն գեղեցիկ հատկություններով առաջիդ բաց է» (2, 473)։ Ռուսաստանին միանալը հայ ժողովրդի փրկության միակ հնարավոր ելքն էր այն

2 Վ. Փափազյան. Պատմություն հայոց գրականության. Թիֆլիս, 1910, էջ 355։

ժամանակ, և դա էր միակ ուղիղ ճանապարհը նաև 1880-ական թթ. արևմտահայության տառապած զանգվածների համար։ «Շահենն» վեպը կարևորվում է հենց այս ճշմարիտ հարցադրումներով։ Մահից հրաշքով փրկված Շահենի կյանքի պատմությունը մի նոր առհավատչյա է հայ և ռուս ժողովուրդների բարեկամության։ Նա ակնատեսի խոր բավականությամբ է հաղորդում ռուս-պարսկական պատերազմի հաղթական ավարտի ցնծագին լուրը։ Վեպի բազմաթիվ էջերում նկարագրվում է ազատարար ռուս զինվորների հոգատարությունը հայերի նկատմամբ, ռուս պետության օգնությամբ հայերի կամավոր գաղթն ու Արևելյան Հայաստանի տարածքում նրանց տեղավորումը և այլն։

Այս վեպը գեղարվեստական առանձնահատկություններով զիջում էր «Հացի խնդրին»։ Արհեստականորեն ձգձգված էր պատումը, սյուժեն խճողված դանաղան հավանական ու անհավանական պատմություններով, դեպքերով ու դեմքերով, կյանքի պատկերման ռեալիստական մեթոդը հաճախ փոխարինվում էր ռոմանտիկական արվեստի հնարանքներով՝ արկածայնություն, հանկարծահաս, ոչնչով չհիմնավորված հանգուցալուծումներ և այլն։ Ռոմանտիզմի ու սենտիմենտալիզմի թանձր շղարշը խաթարում էր վեպի գեղարվեստական համակարգի ամբողջականությունը։ Այդուհանդերձ «Շահենը» իր բարձրացրած հարցերով և հատկապես խոր հայրենասիրությամբ մեր անցյալի գրականության հետաքրքրական երևույթներից է։ Նա բացեց թեմատիկ նոր շերտեր, գաղափարական նոր մտահղացումներ, որոնք էական նշանակություն ունեին ոչ միայն հեղինակի ստեղծագործական կյանքում, այլև ողջ հայ գրականության համար։

1889 թ. Արասխանյանի «Մուրճ» ամսագրում լույս է տեսնում Պռոշյանի նոր վեպը՝ «Ցեցերը», որը շարունակում էր «Հացի խնդրի» թեմատիկ դիծը։ Ավելի որոշակի է դարձել գյուղի դասակարգային շերտավորումը, շահագործումը դարձել է ավելի կատարյալ, բարքերը՝ առավել ապականված, բուրժուականացող դասի փիլիսոփայությունն ավելի համապարփակ։ Միկիտան Սաքոն իր վարվելակերպն արդարացնում է պարզագույն կենսափիլիսոփայությամբ, ըստ որի գյուղացու հացի վերջին պատառը խլելն անգամ դիտվում է որպես արդարացի վարմուք՝ հացի խնդիր է։ «Ինչ կանես՝ արա՛, խաբի՛, քանդի՛, պլոկի՛, գոփի՛, սպանի՛, թաք մի կտոր հաց ունենաս... Աշխարհքիս առաջին մարդիցը բռնած՝ ընչանք վերջի մշակը մի կտոր հացի համար են աշխատում. ուրիշին որ տեսած չըլնիս՝ յասավուլ ես, տասը մովրով ես փոխել, ըսկի մինն էլել ա՞, որ գա ու խալխին չգոփի, մհալի տոմը չքանդի, մհալը փորը չկոխի. ընչի՞ համար՝ հացի, մի կտոր հացի»,—փիլիսոփայում է Սաքոն, գավառացու իր անմիջականությամբ (2, 52)։ Ընդամենը մեկ տասնամյակում փոխվել է գյուղի դեմքը, ժողովրդի կենցաղում հայտնվել են նոր, հոռի բարքեր, որոնք արդարացվում են դարի լուսավորության պիտակով. «Էն վաղ էր, որ նշանն ու հաստատ խոսքը անց էր կենում, հիմի պսակված կնիկն էլ, ասում են, մարդին չի հավանում, թողնում ա գնում ուրիշի կողքը տաքացնում. հիմի ասում են, աշխարհքը լուսավորվել ա, գեղերն ընչի՞ չպիտի լուսավորվեն»,—կարդում ենք «Ցեցերում»։

Գիշատիչներն էլ լուսավորական դարին են համապատասխանեցրել իրենց վարքագիծը. դիմակավորվել են, քաղաքակիրթ վարվեցողությամբ ու հնչեղ, մինչ այդ գյուղին անծանոթ անուններով։ Երեկվա Բալոն, աղքատ ծառայի որդին, միջոցների մեջ խտրություն չդնելով, բարձրացել է պետական պաշտոնյայի աստիճանի և այլևս պատշաճ չի տեսնում իր նախկին անունով՝ Բալո, և ոչ էլ Բալասան կոչվելը։ Հիմա նա Վլադիմիր Մելնիկով է, իր նորահունչ անունով բաժանվել է ծննդավայրից, այրել նրա հետ կապող հոգևոր հարազատության բոլոր կամուրջները։ Այժմ նա գյուղ է գալիս միայն որպես տիրակալ. «Ողջ գյուղն իմ ստրուկն է,—ցինիկ գոռոզամտությամբ ասում է նա,—թրիս երկու կողմն էլ կտրում է... էս ուլեզդումը գեղ չկա, որ ինձ պարտ չլնեն—Վաղարշապատ, Աշտարակ, Եղվարդ, Փարբի, Բիրական, Շարուր, Դարալագյազ—բոլորն իմ ճորտերս են. քաղաքումը բանկերն են ինձ պարտ» (3,

440)։ Այս ամենը նա Հացի խնդրով չի պատճառաբանում։ Գյուղական նորահայտ գիշատիչի համար դա արդեն անցած փուլ է, հիմա նա մտածում ու իր արարքները պատճառաբանում, իր իրավունքները հաստատում է փիլիսոփայական ընդհանրական կատեգորիաներով. «Միշտ այդպես է, թույլը զորեղի համար է ստեղծված, արջը գայլին է խեղդում, գայլը՝ ոչխարին, աղվեսը՝ հավին, կատուն՝ մկանը։ Ե՞րբ ես լսել, որ մուկը կատվին հաղթի, աշխարհքս էդպես եկել է, էդպես էլ շարունակվելու է։ Ինձանից քեզ խորհուրդ, ձեռքդ ընկավ, տեսար, որ քեզնից անուշ է՝ փշրի՛, ոչնչացրո՛ւ, մեջտեղից քո օգուտը հանի՛ր» (3, 445)։ Բալասան աղան միայնակ չէ, գյուղում հաստատվել է շահագործողների մի ամբողջ ոհմակ, որը գայլային ախորժակով խժռում է ժողովրդի աշխատանքը։ Նրանք ցեցի նման աննկատելի բազմացել են. «Առաջ ուտողը մինն էր,—ասում է ցեցերից մեկը՝ Խուդոն,—հիմի՝ մի քանիսը»։ Վեպում կենդանի, հյութեղ գույներով են ներկայացված գյուղական ցեցերի՝ Խուդոյի, Գնթունու, Տեր-Սուքիասի, դավառապետի օգնականի կերպարները։ Բայց ամենից լավ, իր ողջ խորությամբ է բացահայտված գլխավոր ցեցապետի կերպարը, որը հարկ եղած դեպքում ներս է քաշում ճիրանները, բարոյախոսական խրատներ տալիս։ Եթե կապիտալի նախնական կուտակման շրջանի ցեցերը աչքի են ընկնում կերպարների միագիծ պարզությամբ, այս տասնամյակի ընթացքում այնպես են այլասերվել, որ քամելեոնի նման փոխում են գույնը, կեղծ բարեպաշտի դիմակ հագնում. «...հարկավոր է շարունակ մտրակել ազգի ցեցերին, աստիճանամոլ և հացկատակ պաշտոնյաներին, արյունարբու վաշխառուներին, դավաճաններին, մատնիչներին և այն բոլորին, որոնք անձնական շահի համար խեղդում են ժողովրդի մեջ ամենատեսակ բարի ձգտումը» (3, 406),—ասում է Բալասանը, մտքում ծիծաղելով դիմացինի միամտության վրա։

Վեպի կերպարներն այնքան խոսուն են, ակնարկներն այնքան թափանցիկ, որ լույս տեսնելուց անմիջապես հետո իրարանցում առաջացրեցին ցեցերի աշխարհում։ «Մշակի» գրախոսը վեպը համարեց պասկվիլ, որը ձաղկում է ազգային «պատվարժան» գործիչների։ Մեղադրում էին գրողին՝ ասելով, թե նա «զուրկ է իդեալներ ոնենալու շնորհքից և քաղաքակրթական հասունության ամենափոքր նշույլից»[3]։ Այո՛. հեղինակը խփել էր ճիշտ նշանակետին, խուճապ առաջացրել արտոնյալ դասի շրջաններում, շարժել հասարակական միտքը։ «Մուրճը», որը տպագրել էր վեպը, հանդես է գալիս պատասխան գրախոսականով, շարունակում Պռոշյանի սկսած հարձակումը. «Վերջին տարիներում լույս տեսած վեպերից Պռոշյանի «Ցեցերը» յուր հասարակական նշանակությամբ բռնում է անկասկած առաջին տեղը. վեպի վրա թշնամաբար հարձակվում են հենց այն ցեցերը, որոնց դեմ լարված են մեր շանթերը։ Նրանք երևի գոհ են, որ իրենց դիմակները կծածկվեն լրագրական կռիվներով։ «Մշակը» ձեզ օգնական, Բալասան աղա, Տաճատ Գնթունի, և տանուտեր Խուդո»[4]։ Պռոշյանի այս վեպը չուներ «Հացի խնդրի» տիպերի գեղարվեստական ավարտվածությունը, սակայն աչքի էր ընկնում ասելիքի թարմությամբ, կյանքի նոր շերտեր բացելու առանձնահատկությամբ։ Ուշագրավ է, որ այս վեպում, հայ գրականության մեջ առաջին անգամ, արտացոլվել են նարոդնիկական աշխարհայեցության, նրանց գյուղափրկիչ ծրագրի ինչ-ինչ կողմերը։ Վեպում գյուղափրկիչ մտավորականության ֆոնկցիան իրականացնում է քաղաքում կրթություն ստացած Սիսակը։ Այստեղ ներկայացված է նաև մտավորականի մի այլ տիպ, որի խոսքը գործի չի վերածվում։ Ուսանողական տարիներին ազատասիրական, ժողովրդասիրական բարձր հովերով տարված Սմբատը կյանքի դժվարությունների հանդեպ անզոր է գտնվում և փոքր-ինչ համառելուց հետո անցնում է շահագործողների բանակը, ներկայացնելով նրա վատթարագույն թևը, որովհետև ամեն ինչ անում է մտածված, իր շահերին

3 «Մշակ», 1889, № 68։

4 Նույն տեղում, № 7։

ծառայեցնելով գործող օրենքների անորոշ երկդիմությունը, գյուղացիներին ճնշելով նաև իր գիտությամբ։ Եվ երեկվա ազատախոսը դառնում է ավելի ցինիկ, ավելի դաժան հարստահարիչ։

Պռոշյան մտածողը ելք է փնտրում դարի առաջադրած սոցիալական հրատապ հարցերի լուծման համար։ Սակայն այստեղ թուլություններ են նկատվում նրա ռեալիստական մեթոդի մեջ։ Նա, ինչպես մեկ տասնամյակ առաջ, վերադառնում է հասարակության վերափոխման իր ծրագրին։ Եթե նախորդ վեպում նա ռեալիզմի անկասելի ուժով ցույց էր տվել իր առաջադրած բարի քննիչի տարբերակի, բուրժուական հասարակարգի պայմաններում մասնակի բարեփոխություններով ղարի սոցիալական կնճռոտ հարցերի լուծման անհնարինությունը, «Ցեցերում» նորից է դիմում իր իսկ մերժած այդ ծրագրին։ Հայտնվում են բարի դատավորն ու բարի քննիչը։ Սիսակը միայնակ կարողանում է կանգնել մի ողջ ոհմակի դեմ ու հաղթում է։ Պատժվում են ցեցերը, ժողովուրդը հանգիստ շունչ է քաշում։ Հավատո՞ւմ էր արդյոք գրողը իր ձեռքով ստեղծված պատրանքին։ Հազիվ թե։ Որպես մեծ ռեալիստ նա դարձյալ ժխտում է իդիլլիկ կյանքի վերահաստատման այդ միջոցը։ Վեպի գլխավոր ցեցերից մեկը՝ Տաճատ Գնթունին, խույս է տվել արդարադատությունից և մի այլ, հարմար միջավայրում նորից է դրսևորելու իրեն։ Անվնաս է մնացել նաև Տեր-Սուքիասը։ Նրանք ժամանակավորապես ներս են քաշել ճիրանները և հարմար պահի են սպասում։

Գրողի ստեղծած այս ժամանակավոր անդորրը պետք է ժողովրդին՝ ազատագրության ելք որոնելու, ցեցերի անպարտելիության առասպելը ցրելու համար։

Իր վեպերով Պռոշյանը հայտնվել էր հասարակության սոցիալական վերափոխումների բարդ խաչուղիներում և փորձում էր տալ առևտրավաշխառուական կապիտալի զարգացման ամբողջական պատկերը։ Նախորդ երկու վեպերում ստեղծված համայնապատկերային նկարագրությունների մեջ Պռոշյանը նկատում է իրադարձությունների զարգացման հաջորդականության պակաս։ «Բղդե» վեպը կոչված էր լրացնելու նախորդ երկու վեպերում ծավալված իրադարձությունների նախապատմությունը։ Բղդե-Միկիտան Սաքո-Բալասան Աղա կերպարների շարքն ու նրանց շուրջը ծավալված իրադարձությունները առևտրավաշխառուական կապիտալի զարգացումը ցուցադրում են ծագման, լինելության ու հետագա ծավալման ընթացքի մեջ։ Դա պարզից դեպի բարդը գնացող հաջորդական մի ամուր շղթա է, որն իր ցանցերում խճճել է հասարակության առողջ օրգանիզմը, խեղդում, արյունաքամ է անում նրան։

«Բղդեն» չուներ նախորդ վեպերին հատուկ գունապատկերային հարստությունն ու գաղափարական խորությունը, բայց առանձնանում էր էական մի շարք հատկանիշներով, որոնք նորություն էին բերում։ Դա ամենից առաջ ռեալիստական այն խոր դիտարկումներն են, որոնցով աչքի է ընկնում առևտրավաշխառուական կապիտալի նախնականի կուտակման շրջանը, որը առավել հստակությամբ է դրսևորված վեպի «Երեկ և այսօր» գլխում. «Եվ ահա այսպես, տասն և իններորդ դարի երկրորդ կիսաշրջանը մի ընդհանրական չտեսնված հեղափոխություն կատարեց ռուսահայոց կյանքի մեջ, մի վերափոխական տակնուվրայություն, որ դժվար թե աշխարհի ստեղծագործությունից մինչև օրս որևէ դար սորա մի հարյուրերորդական մասը կատարած լինի» (4, 206)։

Վեպը նորություն էր նաև գրական մեթոդով։ Այստեղ լայնորեն օգտագործվում են ռոմանտիկական պոետիկայի տարրերը, շատ հաճախ գործողությունների ու իրադարձությունների զարգացման հիմքում դրվում են ոչ թե դեպքերի ռեալ ընթացքից բխող իրողություններ, այլ արկածային տարրեր ու պատահականություններ։ Պետք է նկատել սակայն, որ ռոմանտիզմի պոետիկայի լայն կիրառումը վեպում չի թուլացրել նրա պատկերաստեղծական միասնությունն ու գեղարվեստական համակարգի ամբողջականությունը, այլ ստեղծել

է մի համաձուլվածք, որը գրողին օգնել է առավել խորությամբ բացահայտելու իր հերոսների հոգեբանության ձևավորման ընթացքը։ Այս վեպն աչքի է ընկնում նաև կերպարների հոգեբանական պատճառաբանվածությամբ, նրանց ինքնավերլուծման-ինքնաճանաչման առանձնահատկություններով։

Պռոշյանի սոցիալական վեպերի շարքը եզրափակվում է «Հունոն» վեպով (1900 թ.)։ Այս շարքում դա միակն է, որտեղ վիպական կոնֆլիկտը ծնվում է ոչ թե սոցիալական հողի վրա, այլ՝ բարոյական սկզբունքների բախումից։ Գրողը մի պահ թույլ է տվել սոցիալական տարբեր խավերի պատկանող Զաքոյի ու Հունոյի ընկերության հնարավորությունը, հետո փորձության է ենթարկել այդ մտերմությունը, որն ամուր էր միայն արտաքնապես։ Նրանք երկուսն էլ սիրում են նույն աղջկան և վճռում են ընտրությունը թողնել հարսնացուին, խոստանալով ենթարկվել նրա կամքին։ Աղջիկը նախընտրում է աղքատ Հունոյին։ Այստեղ է, որ Զաքոյի մեջ արթնանում են իր դասին հատուկ էգոիզմն ու ինքնահավան մեծամտությունը։ Վճռելով, որ հարստությունն իրեն իրավունք է տալիս խլել ընկերոջ երջանկությունը, փորձում է բռնությամբ իր օգտին լուծել հարցը, ուժով տիրանալ գեղեցկուհի Գյուլոյին։ Միջադեպն ավարտվում է մեծահարուստ Մելիք-Մրտոյի որդու՝ Զաքոյի մահով։ Այնուհետև բարոյական կոնֆլիկտը սոցիալական հիմնավորումներ է ստանում, դառնում վիպական հետագա գործողությունների հիմք։ Հունոն, ակամա մարդասպան դառնալով, ստիպված է հեռանալ գյուղից։ Նա գաղափարական հերոս է, որը Պռոշյանի ստեղծագործության մեջ զարգացման երկար ճանապարհ է անցել, իր մեջ ամփոփելով սոցիալական իր դասի բոլոր բնորոշ գծերը, նաև դժգոհությունը և ըմբոստությունը տիրող կարգերի դեմ։ Եթե Պռոշյանի ստեղծագործության մեջ ցեցերի զարգացման ընթացքը գծվում է Բղդե-Միկիտան Սաքո-Բալասան Աղա կերպարաշարով, ապա համապատասխանաբար ստեղծվում է կերպարների մի այլ համակարգ, որը վեպից վեպ զարգանալով պիտի վերաճեր հասարակական լուրջ նշանակություն ունեցող ուժի, առաջադրեր կյանքի իր փիլիսոփայությունը, արդարացնելով բռնության դեմ զինված պայքարի դուրս գալու ուղին։ Հունոն անձնական ողբերգության ճանապարհով հասնում է ժողովրդի մեծ ողբերգության գիտակցությանը. «Աշխարհքումս ո՞վ է տվել արդարություն, գութ, խղճմտանք, աշխարհքումս արդարն ու լավը նա է, ով քսակումը ոսկիք, ձեռին իրավունք ունի» (5, 356)։ Եվ ահա, մանկուց աշխատասեր, ազնիվ ու բարի Հունոն ավազակ է դառնում, փորձում իր խմբի ջանքերով շտկել «շավղից դուրս եկած աշխարհը»։ Նրա սոցիալական ծրագիրը հեղափոխական վերափոխություններ չի ենթադրում, առանց տիրող կարգերը փոխելու նա ցանկանում է արդարությունը վերահաստատել իր երկրում. «Ես կողոպտում սպանում եմ խեղճ գյուղացու քրտինքը լափողներին, անտեր-անտիրական որբին քերթողին, շահին շահ առնողներին, գողին ավազակին, ադամորդու հայտնի ու թաքուն թշնամիներին, խաբեբաներին, անօրեններին ու նրանց, որոնց տունը բերնեբերան լիքն է ու մի հատ փող, մի հատիկ ցորեն իրենց աշխատանքովը չի ներս եկել, աստծու ստեղծած անբախտների դառն աշխատանքի պտուղն են. էսպիսի անիրավների սրտումը մխվելու համար է իմ թուրս սրվել» (5, 357)։

Այս վեպում գրողն առաջին անգամ գործողությունները դուրս է բերում Արարատյան դաշտից, փոխադրում Սևանի ավազանի լեռնային տեղանքը, ասես ցանկանալով հատկապես շեշտել սոցիալական չարիքի տարածման սահմանները, որը չի սահմանափակվում մեկ կամ մի քանի գավառներով։ Կողմնակիորեն դա է հաստատում նաև Հունոյի խմբի ինտերնացիոնալ կազմը։ Հունոն իր շուրջն է համախմբել հայ, թուրք, քուրդ իր նման դժգոհ քաջերի և որպես արդարության դատի պաշտպան մեծ համբավ է վայելում նաև թուրք ու քուրդ բնակչության աշխատավոր խավերի մեջ, «նրա արևով են երդվում» բոլորը, նրան են ապավինում ասելով՝ «մի աշխարհք է, մի Հունո՞»։ Վեպի վերջում «...Հունոն ինքնակամ կալանավորվել է և ի ցավ Գեղարքունի գավառի թուրք ու հայ ճնշված ու հարստահարված դասակարգի, Սիբիրի ճանապարհն է բռնել»։ Հունոն մեր գրականության մեջ էլ ուներ իր զուգահեռները՝ Տեր-

Մզրախ, որին Թ. Ավգալբեգյանը իրավացիորեն համարում է գաղափարական ավազակի առաջին կերպարը մեր գրականության մեջ, Արզուման և Քյորօղլի՝ Ղ. Աղայանի «Երկու քույր» վեպից ու «Քյորօղլու» պոեմից։ Սակայն Հունոն անհամեմատ առաջ է անցել իր գրական նախորդներից։ Պողոշյանի կերտած գաղափարական ավազակի այս տիպը հասարակական ու անձնական շահի միասնությամբ, անձնական ժողովրդի շահերին ծառայելու գիտակցությամբ նոր երևույթ էր սոցիալական այս տիպի պատմության մեջ։ Սակայն Հունոյի պայքարն էլ պարտության էր դատապարտված։ Հունոն, առասպելական Մհերի նման, չի կարողանում տանել երկրում տիրող անիրավությունները, և ինչպես Մհերն է փակվում Ագռավաքարում, այնպես էլ Հունոն է ինքնակամ ասում Սիրիր։

«Հունոն» մեր վիպագրության մեջ թարմություն էր նաև իր ժանրային առանձնահատկություններով։ Այն գրված է ուղեգրական վեպի ժանրով, որն իր հետ բերելով կառուցվածքային որոշակի առանձնահատկություններ, հնարավորություններ է ստեղծում հայրենի բնաշխարհի, մարդկանց կենցաղի ու սովորույթների գեղարվեստական վերարտադրության համար։

«Սկիզբն երկանց» վեպում Պողոշյանը նորից է անդրադառնում հայ աղգային-աղատագրական շարժումներին։ Պատկերում է XIX դարի 50—60-ական թթ. ազգային շարժման ղարթոնքը, թուրք բարբարոսների կամայականությունները, ժողովրդի ողբերգությունը։ Այս վեպը, գեղարվեստական առումով նոր բան չավելացնելով գրողի ստեղծագործությանը, արժեքավոր նոր կողմերով լուսաբանեց «Կռվածաղիկ» և «Շահեն» վեպերում արծարծված աղգային-աղատագրական պայքարի խնդիրները։

Պողոշյանի հուշագրությունը (որտեղ գրողը անձնական կյանքին ներհյուսում էր իր ժամանակի հասարակության պատկերը), բաղմաթիվ վիպակները, պատմվածքներն ու գրական-հրապարակախոսական հոդվածները շահեկանորեն լրացնում են մեծ գրողի ստեղծագործական դիմանկարը։

Պողոշյանն իր ստեղծագործական բեղմնավոր կյանքի մահկանացուն կնքեց 1907 թ. Բաքվում, աճյունը տեղափոխվեց Թիֆլիս և ամփոփվեց Խոջիվանքի հայ գրողների պանթեոնում։

Պողոշյանը սերունդներին թողեց իր գաղափարական-գեղագիտական հավատամքը՝ ժողովրդի կյանքից, ժողովրդի համար, ժողովրդի լեզվով։ Հենց այս հավատամքի մեջ է նրա ստեղծագործության արժեքը։ Այդ հավատամքի շնորհիվ է, որ նրա գլուխ գործոցները (մասնավորապես «Հացի խնդիրը») թարգմանվեցին ռուսերեն, գերմաներեն, լեհերեն, բուլղարերեն։

ПЕРЧ ПРОШЯН

(К 150-летию со дня рождения)

Г. Д. ДАРБИНЯН

Резюме

Перч Прошян—классик армянской литературы, продолжатель дела Х. Абовяна, один из основоположников армянского реалистического романа. В своих знаменитых романах «Сос и Вардитер», «Из-за хлеба», «Мироеды», «Бгде», «Уно», «Яблоко раздора», «Шаген» и др. он отразил социальные конфликты середины XIX в., показав жизнь трудового армянского крестьянства, стал выразителем его взглядов и чаяний. Перу П. Прошяна принадлежат также многочисленные стихи, пьесы, мемуары, он был видным общественным деятелем своего времени.